

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»
Աղեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Ղր.

ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵՍՅ 25

ԲԱՃՆԵԳԻՆԸ
ԿՈՆԵՆԿ Է



ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ֆր.

ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵՍՅ 8

ԿՈՎԿԱՍ
ՏՅԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԵՌԻՆԻՆԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՍՏԱՄԵՅ ԳՐՈՒՇ ՈՂԶ

Բ. ՏԱՐԻ

4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 15

ՉԵԿՈՅՑ

Փիւնիկի պահած լուսիկներն շփացած, Աղեքսանդրիոյ Առժ. Թաղ. Խորհուրդին նորընծայ պաշտօնաթերթը, իր Տիրացու Խմբագրին (°) բերնով կ'աշխատի ժամանակէ մ'ի վեր Փիւնիկը հոշակել կուսակցութեան մը կամ անձնաւորութեան մ'օրկանը:

Ժամանակն է յայտարարելու թէ՛ իր երեւման թուականէն մինչև ցարդ, Փիւնիկը բոլորովին անկախ է, Արշաղոյսի պէս ծախուած կամ կախուած չ'ըլլալով: Մեր նպատակն եղած է, է, և պիտի ըլլայ պաշտպանել ժողովրդին իրաւունքը, ազգ. հաստատուած օրէնքները, դիմակաղերձ ընել ժողովուրդին միամտութիւնը շահագործողները, ըլլայ ուսմիկ, ըլլայ տոհմիկ:

Հետեւաբար, մի անգամ ընդ միշտ րմբերանելու համար այդ ՓՏՈՒԹԵԱՆ ՕԶԱՂԻՆ ՕՌԿԱՆԸ, հրատարակեցինք սոյն առաջին և վերջին Չեկոյցը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ ՄԷԿԻ

ԳԱՅԹԱԿՂՈՒԹԻՒՆԸ

Ճար ս'Ալեքսանտրի, Սեպտ. 2 ի Գրանիկով, Սուլթանին Գահակալութեան 25րդ տարեդարձին յատկացած բաժնին մէջ, քաղաքիս հանրային անդորրութիւնն ապահովելու համար ձեռք առնուած միջոցներուն յիշատակութեան անմիջապէս յետոյ, ղետեղած է հետեւալը.

ՑՈՅՑԻ ՉՐՈՅՑՆԵՐ

Չրոյց մը շղատելու թէ՛ քանի մը Հայեր մտադիր էին երէկ առաւօտ կատարուած Ս. Պատարագի միջոցին ազդեցութեամբ ցոյց մ'ընելու հայկ. եկեղեցիին մէջ:

Հետեւապէս, Չիբբօլարօ պէյ, առաւելն զրկած էր ծպտուն ոստիկաններու խումբ մը, ընդ առաջնորդութեամբ գաղանի ոստիկանութեան պետ

Պ. Թրանձիի և Տը Դուրիս մանուրին։
Հոն, ինչպէս ամեն ուրեք, կարգ
ու կանոնը վայրկեան մ'իսկ չը խոն-
դարուեցաւ»։

Հասկցա՞նք. երբ կ'սպառին սու-
տերը. երբ այդ սուտերով փաթ-
թուած փաստերը կը շախշախուին,
երբ Աղեքսանդրիոյ հայ հասարա-
կութեան բովանդակ ողջամիտ մասը
կ'ըմբռնէ իսկութիւնը. երբ, լիս-
վին կ'ապացուցուի թէ՛ Սահմանա-
դրութիւնը բռնաբարուած է Աղեք-
սանդրիոյ մէջ. երբ, ոչոքանքով կամ
սպառնալիքով հաւաքուած ստորա-
գրութիւններով իսկ կարելի չ'ըլլար
հաստատել օրինաւորութիւնը Առժ.
Թաղ. Խորհուրդին. երբ, վերջապէս,
ազատ Մամուլի մ'անաչառ ու անխը-
նայ հարուածներուն տակ կը փշրուին
կեղծիքի ու ենթրիկի գուլ զէնքերը,
այն ասեմ, 'ի լրումն Դայթակզու-
թեան, այդ անարգ ու ընդվզեցուցիչ
միջոցը կ'ընտրուի, օրինասէր ու հան-
դարտ ժողովուրդը զայրացնելու եւ
զայն ծայրահեղութեան մղելու նեն-
գամիտ դիտումով։

Ո՞ր աստիճան անխղճութիւն է
Աղեքսանդրիոյ Հայ հասարակութեանը
վերադրել աղմկաշոյշ ցոյց մ'ընելու
մտադրութիւնը, պատեհ առիթ բռնե-
լով Սուլթանին Գահակալութեան տա-
րեղարձը։

Մարդ կը փորձուի հաբցնել մեր
Գեր. Սրբազան Առաջնորդին թէ՛ արդ-
եօք Սեպտ. 1ի կիրակի օրուան Պա-
տարազը Սուլթանին արեւշատութեան
և դոհաբանութեան համա՞ր պիտի մա-
տուցուէր յանուն Հայոց Ազգին, այն
ալ, Տալարիկի նոր շարդին վաղոր-
դայնը. և այդ պատճառաւ է որ ինք,
մեր Սրբազանը, երեւակայած է ցոյցի
մը պատահականութիւնը, որուն ա-
ռաջքն առնելու բարի նպատակով հրա-
ւիրած է խումբ մը գաղտնի ոստիկան-
ներու 17 թուով, որոնք, եկեղեցիին
մէջ ու դուրսը Ս. Պատարագի միջոցին
պարտաւորուեր են հսկելու պահպա-
նութեան կարգ ու կանոնին, որ, սա-

կայն, կ'ըսէ Թար տ'Ալէքսանտրի,
վայրկեան մ'իսկ չը խանգարուեցաւ։

Ըսել է թէ՛ ոստիկանութեան քա-
ղած տեղեկութիւններուն կամ անոր
կազմել տրուած գաղափարին համա-
ձայն՝ աղմկայոյզ ցոյց մը կ'սպասուէր
եկեղեցիին մէջ։

Չ'մոռնանք ստորագծելու հոս այդ
երեւակայական ցոյցին աղմկաշոյշ ա-
ծականը, որ, անխուսափելիօրէն վեր-
յուշումը կ'արթնցնէ «Սահմանադրու-
թեան Պաշտպանները» տխուր յօդուա-
ծին «Աղմկաշոյշ խեղակիւն»։

Վերջապէս, ամեն պարտաճանաչ
ու դիտակից ազգային՝ արդար զայրոյթ
մը պիտի զգայ անտարակոյս այդ նը-
լաստ ու ընդատուցիչ միջոցին դէմ,
որ, դժբաղդաբար 'ի գործ դրուած է
ընդ հովանեաւ տեղական ազգ. իշ-
խանութեան, ազգ. Ս. Եկեղեցիին մէջ
Ս. Պատարագի միջոցին, 'ի ներկայու-
թեան Գեր. Առաջնորդին...։

Սակայն, եթէ Հայաստանի մէջ
Գորդերը կը մտնեն մեր Եկեղեցի-
ները կողոպտելու և պղծելու համար,
Եգիպտոսի մէջ, գոհութիւն Աստուծոյ,
չնորհիւ մեր Ս. Առաջնորդին և Առ-
ժամեայ Թաղ. Խորհուրդին, գաղտնի
ոստիկաններու խումբ մը կը մանէ,
հսկելու համար կարգ ու կանոնին, որ,
սակայն չէ՛ խանգարուած վայրկեան
մ'իսկ։

Միջադէպին վրայ քանի մ'արե-
ներ անցան, բայց գայթակղութիւնը
մնաց, ամօ՛թ, հազա՛ր ամօթ մեղի, որ
այսպիսի ազատ երկրի մը մէջ կը հան-
դուրժենք ա՛յսքան նուաստացնող նա-
խատանքի ու զրպարտութեան։

Սակայն, թո՛ղ լաւ դիտնան ա-
նոնք, մեր խառնակիչներն ու պղտոր
լուրի մէջ ձուկ որսացողները՝ մու-
թին զաւակները. թող լաւ դիտնան
որ հայ հասարակութիւնը, ուղղամտու-
թենէ առաջնորդուած և իր անբռնա-
բարելի իրաւունքներովը զօրացած, չը
պիտի դադրի մաքառելէ, ամեն օրի-
նաւոր միջոցները գործադրելէ, մինչև
որ դիմակազերծ ընէ զիրենք, դառնա-

զգեստ գայլերը, պաշտպանելով բռնաբարուած Սահմանադրութիւնը:

Համբերութիւն, խոհեմութիւն և աչալընթիւն. ահա՛ երբեակ պայմանները, որոնք անհրաժեշտ են օրինասէր ժողովրդի մը նուիրական նպատակն հրադործելու համար:

Հիւսիս ըսաւ.

«Արդարութիւնն աշատ է, աշատութիւնն՝ արդար».

Պաշտպանե՛նք ուրեմն Սահմանադրութիւնը, որ մեր ազգային կեանքին մէջ՝ արդարութեան ու ազատութեան երաշխաւորութիւնն է:

Ու կրկնե՛նք անդադար, եգիպտոսի բարերար մեծ Հայ վարչադատին խօսքը.

«Արդարութիւնն է հիւսիս աւեակ կառայարութեան»:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԸ

Գերապատիւ

Տ. Յովսէփ Եպիսկ. Այվազեան Բարեխնամ Առաջնորդ, Նախագահ Ազգ. Գաւառ. Վարչութեան Եգիպտոսի Հայոց:

Աս

Սրբազան Հայր,

Կը խնդրեմ Ձեր Սրբազնութեան խորին ուշադրութիւնը ներկայ բաց նամակիս վրայ, որուն շարժառիթն եղաւ «Արշալոյս»ի 28 Օգոստոսի թիւով «Տեղական շորեր»ու բաժնին մէջի Շֆաստեղան մը հատուածը:

Խղճի պարտականութիւն մ'է որ զիս կը հարկադրէ Ձեր Սրբազնութեան բարձր վկայութիւնը կոչելու յիշեալ հատուածին մէջ յայտնուող կարգ մ'իրողութիւններուն վրայ (որոց մէկ հիմնական մասը ծանօթ եղած է միայն Ձեզի և ինձի) որոնք ճշմարտութեան բացարձակօրէն հակառակ կերպով հրապարակ բերուած են:

Յիշեալ հատուածը կ'սկսի այսպէս. «Գահիրէի աւեակ կոչմը գրոյց կը շրջի

թէ Տ. Մ. Գալժաւեան ն. Գեր. Ս. Առաջնորդը երեկոյցի մը հրատարակող, իր հաւախոհներուն հետ-8-10 հոգիի յափ-պաշարած են Նորին Սրբաշնորհիւնը եւ քարտեկահակաւ ճեղուելոյ ստորագրութիւն մը առնելոյ ուզած են անկե, եւն եւն»:

Հիմայ ե՛ս պատմեմ համառօտիւ բուն եղելութիւնը, և Դուք ըսէ՛ք թէ որո՞ն է ճիշդը:

Կը յիշէք անշուշտ, Սրբազան Հայր, 210 ստորագրութիւն պարունակող հանրագրութիւնն իմ ձեռքէս ընդունեցաք օգոստ. 5ին բշ. իրիկունը ժամը 6 1/2 ին ատենները. կարդացիք զայն ու իրաւացի գտաք ամբողջ պարունակութիւնը՝ նոյն առթիւ էր որ ինձի յայտնեցիք Ձեր բարձր կամքը, Տիար Մ. Գալժաւեանի բնակարանին մէջ խորհրդակցութեան համար ժողով մը դուժարելու յիշեալ հանրագրութեան փափագուած ելք մը տալու նպատակաւ: Սակայն դեռ կը յիշեմ Ձեր այն նշանակալից խօսքերը զորս աւելցուցիք: «Աստի՛ պատրաստ եմ թաղ. Խորհուրդիս օրինաւորութիւնը հաստատելու համար յօդուած մը որ չորեքշաբթուան «Արշալոյս»ին մէջ պիտի երեւնայ. ապաւեցե՛ք, ըսի՛ք, ա՛յն աչկարքակ մըն յայտնուեալ կ'որոշեմ համախառնօրէն, կը հաւաքուիմ Տիար Մ. Գալժաւեանի տունը, ինչպէս ուրիշ անգամներ աչ հաւաքուած եմք ու որոշում մը կուսակալ հանրագրութեան նկատմամբ»:

Նոյն շաբթուան կիրակի առաւօտուն, կրկին ներկայացայ Ձեր Սրբազնութեան, կարդացած ըլլալով «Արշալոյս»ի Ձեր կանխաւ ակնարկած «Մանկանադրութեան պաշտպանները» յօդուածը Լևոն Մկրտիչեան ստորագրութեամբ:

Կը յիշէ՞ք, Սրբազան Հայր, նկատելով որ հետեւեալ օրը մտադիր էիք երթալու Գահիրէ, անհրաժեշտ գրտաք նոյն կիրակի գիշերը կատարելու Ձեր առաջարկած համախմբումը, և արդէն ա՛յդ նպատակով է որ Տ.

Մ. Գալֆաեանի պարագաներէն Տ. Միհրան Չարազը փնտռել տուած ու չ'գտած ըլլալնիդ իմացնելով՝ յանձնարարեցիք ինձ խնդրել Տ. Միհրան Գալֆաեան է որ հաղորդէ թէ՛ պիտի կրնա՞յ ընդունիլ Ձեր Սրբազնութիւնը եւ հրաւիրեալներն իր սրահին մէջ:

Ու Տ. Մ. Գալֆաեան, Ձեր սպասած լուրը հաղորդելու առիթէն բնական քաղաքավարութեամբ մը օգտուելով խնդրած էր մի միայն Ձեր Սրբազնութեան մասնակցութիւնն իր ընտանեկան ընթրիքին: Ընթրիքէն յետո՛յ է որ եկան բոլոր հրաւիրեալները և տեղի ունեցաւ համախմբումը, որուն նպատակը, Տ. Մ. Գալֆաեան, ըստ Ձեր առաջարկութեան, պարզեց ներկայից, բացատրելով նաև որ ժամանակին սղութեան պատճառով կարելի եղած չ'էր օւրիշներ ալ հրաւիրել Ձեր Սրբազնութեան առաջարկած համախմբումին,

Իմ նպատակէս դուրս է հոս թուել սոյն ժողովին մէջ վիճաբանուած զանազան հարցերը. մէջ բերինք միայն հետևեալ երեք գլխաւոր պահանջները, որոնք առաջարկուեցան Ձեզ:

1. Հրապարակաւ հետքեղ և ան Մըկրտիչեանի «Մահմանդրութեան պաշտպանները» յօդուածին այն մասերը, որոնց մէջ այդ պարօնը նախատինքներ ուղղած էր ժողովուրդին հասցէին, թէ՛ Ձեր Սրբազնութեան և թէ՛ Առժ. Թաղ. Խորհուրդին անունով: Ժողովն այս պահանջն ըրաւ յենլով մանաւանդ Ձեր Սրբազնութեան ինքնաբուխ և բացարձակ յայտարարութեան վրայ թէ՛ «Փիւնիկ»ի Յաւելուածը ջախջախիչ պատասխան մ'է Մանմ. պաշտպանները» յօդուածին և Դուք, Սրբազան Հայր, սկզբամբ ընդունեցիք մեր պահանջը, զոր արդար գտաք և օրինաւոր. այնպէս չէ՞:

2. Յատենի ժողովոյ լսելով Ձեր յայտարարութիւնը թէ՛ Արդի Թաղ. խորհուրդը ասանականորակաւ չե՛ հետևաբար ապօրինի է, պահանջեցինք

նոր ընտրութիւն մը: Եւ Դուք, Սրբազան Հայր, Դուք չէի՞ք որ խոստացաք նոր ընտրութեանց ձեռնարկել անսխալապէս ետքը վերադարձէն Վսեմ. Պօղոս բաշային, ըստ նորին յանձնարարութեանը զոր մեզի յիշեցուցիք, և այլ յանձնարարութիւնն յարգելու պատշաճութիւնը շեշտեցիք: Մենք ալ, համամիտ չ'եղա՞նք Ձեզ, Սրբազան Հայր, երբ խոստացաք մանաւանդ յայտարարել հրապարակաւ ՚ի գիտութիւն արդոյ հասարակութեան թէ՛ նորին Վսեմութեան Պօղոս բաշայի վերադարձէն անմիջապէս յետոյ պիտի ձեռնարկէք նոր ընտրութեանց:

3. Գալով հասարակութեան մէջ տիրող երկպառակութեանց և դայթակցութեանց գլխաւոր գործուիչն եղող տխուր անձը ազգ. գործերէ անյապաղ հեռացնելու անհրաժեշտութեանը, կը յիշէք անշուշտ, Սրբազան Հայր, որ թէ՛ Ձեր Սրբազնութեան, թէ՛ Վսեմ. Պօղոս բաշայի և թէ՛ ուղղամիտ հասարակութեան քանիցս արտայայտած համոզումները բոլորովին յար և նման եկան իրարու, և կայացան հաստատուելու թէ՛ Աղէքսանդրիոյ հայ հասարակութեան Աղբիւր Չարեացն եղած է այդ տխուր անձը: Սակայն, տեղն է հոս խոստովանելու, հակառակ Ձեր համամտութեան՝ երբ կարգը եկաւ գործադրութեան, կանգ առիք բացառանջելով. «Ես չե՛մ կրնար»: Ժողովականաց կրկնակի հարցումներուն վրայ թէ ինչո՞ւ չէ՛ք կրնար, պատասխանեցիք.

«Ձե՛մ կրնար, ըսի, որովհետև կը վախնամ ես խռովութիւններէ. եթէ այդ մարդը վաղն երնէ 50 Հնչակեան բերէ վրաս և Առաջնորդարանը կոխէ, այն ատեն ի՞նչ պիտի ընեմ ես»:

Արդ, ամփոփելով վերոյիշեալ իրողութիւնները, կը հաստատուի թէ.

1. Տ. Մ. Գալֆաեան չէ՛ հրաւիրած զՁեզ երեկոյթի մը. այլ Ձեր կամքով՝ իր սրահը դրած է Ձեր տրամադրութեանը տակ, այն դիշերուան ժողովին համար, զոր Դուք առաջար-

կած էք գումարել հանրագրութիւնն ստորագրողներէն ոմանց մասնակցութեամբը:

2. Մեր պաշտպանած գառը Ձե՛ր ալ պաշտպանածն է, հետեւաբար ո՛չ պաշարու մի և ո՛չ ճնշումի տեղի կար. և ո՛չ ալ Տ. Գալթեանը գոհացնելու մասնաւոր խնդիր մը:

3. «Շխաւեղան բառը՝ անճահ և անիմաստ ակնարկութիւն մ'է այն պաշղ ընտանեկան ընթերթին, որուն Գուք միայն մասնակցած էք իբր միակ հրաւիրեալը. հետեւապէս օնկանիս վարիչը, իր սարօքը պատռած չէ՛ նոյն շխաւեղանը, ինչպէս որ և ո՛չ իսկ ժողովին ներկայ գտնուած է նա:

Գաղտնիք մը միայն կը մնայ զոր ես ինքս անկաշող եմ լուծելու. այն է, Գահիրէի ամեն կողմը շրջող զրոյցը... որուն՝ եթէ Ձեր Սրբազնութիւնը հեղինակը չէ, առանց վարանելու պիտի փութայ հերքել ուրեմն այն հատուածին անկապակից ամբողջութիւնը:

Ձեր Սրբազնութեան կը մնայ այսուհետեւ հանգարտեցնել գայթակղած մտքերը:

Հայցելով Ձեր հայրական օրհնութիւնները, մնամ միշտ,

Ձեր Սրբազնութեան,

Խորին յարգանք,

Ե. ԹՈՒՐՇՈՒՃԵԱՆ

2 Սեպտ. 1901

ՎԵՐՋԻՆ ՓԱՍՏԸ

Ազգային Սահմանադրութեան Ազգային Սահմանադրութիւնը պահանջողներուն դէմ նախապարձակը եղաւ, ինչպէս յայտնի է, Տիար Լ. Մըկրտիչեան, որ նախատալից յօդուածովը հրապարակաւ յայտարարեց թէ Սահմանադրութիւնը արդէն գործադրուած է և թէ արդի Պատ. Թաղական Խորհուրդը ժողովրդի քուէներով ընտրուած մարմին մ'է, սահմանադր-

րական ինչպէս իր կազմութեամբը նոյնպէս իր ոգիովը: Բայց ի մեծ դժբաղդութիւն հեղինակին և համախոհներուն, այս միջոցը ի գերեւ ելաւ. «Փիւնիկ»ի մէջ երեցած Չախալիչ փաստերու հաշուածին տակ Տիար Մըկրտիչեանի շինծու փաստերովը կառուցուած թղթէ գլխակը հիմնայաւտակ կործանուեցաւ:

Սահմանադրութեան գործադրութեան պահանջը խեղդելու համար խորհուած երկրորդ միջոցը եղաւ հակահանրագիրը: Բայց ստորագրութեան մուրացիկները գեռ իրենց փողոցային պաշտօնը չ'աւարտած՝ այդ ձեռնարկին ալ անբաւականութիւնը ապացուցուեցաւ «Փիւնիկ»ի այն յայտարարութեամբ թէ պատմական իրողութիւնները քուէի չեն ենթադրուելիք — Ե. Պատ. Թաղական Խորհրդին հակասահմանադրական կազմութիւնը անժխտելի պատմական իրողութիւններու շարքէն է...:

Խնդրոյն մօտէն շահագրգռուողներէն շատեր արդէն իրենց վճիռը տուած էին թէ փաստերու կռուանին վրայ «Փիւնիկ»ին գաղափարակիցները յաղթանակը տարին: Սակայն հակառակ կողմը իրեն թիկունք ունէր ամենազօրաւոր փաստ մը որ «Փիւնիկ»ի համակրողները միամտաբար անտես ըրած էին, բայց որը ամենանեղ պարագային երևան պիտի բերուէր Սահմանադրութեան պաշտպաններուն բոլոր փաստերը միանգամայն մէկ հարուածով տապալելու: Ժամանակը, կերևի, եկած էր, և ահա այդ փաստը երեցաւ. այդ փաստը ուրիշ բան չէր, բիրտ ուժի կիրառութեանն էր:

Այս կիրակի, 1 Սեպտեմբեր, Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ բակը և ներսը լեցուած էր ծպտեալ ստիկաններով որոնք ամեն հարկ եղած միջոցները ձեռք առած էին ի հարկին ստիկանութեան աւելի մեծ ոյժ մը համախմբելու եկեղեցւոյն մէջ...: Աւելորդ է նկարագրել այդ չ'սպասուած հիւրերու ներկայութենէն առաջ եկած շփոթութիւնը բարեպաշտ հաւատաց-

եալներու մէջ և մանաւանդ կանանց իրարանցումը և սարսափը... Ինչո՞ւ ոստիկանական այս արտակարգ սնօրէնութիւնները... Խորհո՞ւրդ, որուն լուսաբանութիւնը Պատ. Թաղ. Խորհուրդը և Սրբազան Առաջնորդը միայն կրնան տալ մեզի: Արդարև ամենքս վստահաբար գիտենք թէ Եգիպտական լուսամիտ կառավարութիւնը ամեն փափկանկատութիւն ունի հանդարտ և խաղաղասէր հասարակութեան մը զգացումները ո և է կերպով չվիրաւորելու հետևաբար անկաշի է եթադրել թէ առանց Սրբազան Առաջնորդին կամ Պատ. Թաղ. Խորհրդին կողմէ հրաւերի մը կամ դէժ՝ առանց անոնց գիտութեան եւ հաւանութեանը, եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած ըլլայ այդ ոստիկանական համախմբումը, քանի որ մանաւանդ՝ ոստիկանութեան կասկածները չեն բնութիւն ունեցող ամենաթեթեւ երևոյթ մ'անդամ գոյութիւն չունէր հայ հասարակութեան ընթացքին ու վարմունքին մէջ:

Այս դէպքը մանաւանդ այն պատճառով աւելի ծանրակշիռ է որ կը զուգարկի Սուլթանի գահակալութեան տարեդարձին, որով գայթակղեցուցիչ մեկնութիւններու առիթ տուած է ինչպէս օտար մամուլին նոյնպէս ազգային շրջանակներու մէջ: Ուզուած է այն տպաւորութիւնը թողուլ թէ կիրակի առտուան Պատարագը կը մատուցուէր Սուլթանի գահակալութեան տարեդարձին առթիւ՝ նորին Վեհափառութեան ամենահաւատարիմ հպատակ մեր Պատ. Թաղ. Խորհուրդին ու Սրբազան առաջնորդին կարգաբերութեամբ, բայց թէ հայ հասարակութեան մէջէն խմբակ մը աղիկաշոյջ ցոյցով մը խանգարել կը սպառնար այդ արարողութիւնը. — դէժ այս է մինչև հիմա եղելութեան տրուած միակ մեկնութիւնը մամուլին մէջ: Ինչպէս կիրակի օրուան Ս. Պատարագին Սուլթանի արեւշատութեան համար կատարուած արարողութեան մը հանդամանք ընծայուելը խորապէս

վիրաւորած է տեղւոյս հայ հասարակութեան ամենէն սրբազան զգացումները, նոյնպէս իբր թէ խմբակի մը խռովարարական դիտումներ վերադրելու ամենաստոր գրպարտութիւնը ընդհանուր գայթակղութիւն և սրամտութիւն առաջ բերած է:

Եւ այս ամէն գարձուածքները ինչպէս բացատրել առանց գործին մէջ agent provocateur ներու գերը նշմարելու, որոնք եղևակայական խառնակութիւն մը արգիլելու պատրուակին տակ իրապէս զայն ստեղծելու աշխատած ըլլան, պիտի ջուրի մէջ ձուկ որսալու հաւես... Եղելութիւնը պարզապէս իբր կառավարական նախազգուշական կարգադրութիւն մը նկատելը, ինչպէս ըսինք, ըստըստին անտեղի կը լինէր, որովհետև հայ հասարակութեան ամենէն գերագրգռուած տարիներու մէջ իսկ եգիպտական իշխանութիւնները իրենց մտքէն չանցուցին Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրը ոստիկանական հսկողութեան տակ առնել Հայոց եկեղեցին, որպէս զի անդորրութիւնը չի խանգարուէր...:

Աւելորդ չէ շեշտել թէ այս առթիւ հասարակութեան ամեն խաւերուն մէջ առաջ եկած սրամտութիւնը գըլխաւորապէս Սրբ. Առաջնորդին եւ Պատ. Թաղ. Խորհուրդին դէմ է, որոնք, եթէ իրենք եղած չըլլան թեւադրիչները, ակներև է որ գոնէ չեն շանացած առաջք առնել ոստիկանութեան գործակալներու մեր սրբավայրին մէջ յանդէպս երևումին, ոստիկանները առաւօտէն մինչև եկեղեցական արարողութեանց վերջանալը կեցած են եկեղեցւոյ մէջ և բակը:

Շատեր մեզի հետ կը կարծեն թէ մեր օրինական փաստերուն դէմ հանուած վերջին փաստն է այս — թիւս ուժը: Բայց ինչպէս որ սուտերը եւ խեղաթիւրումները չքացան ճշմարտութեան առջև որը այս էջերուն մէջ լուսաբանուեցաւ, նոյնպէս վստահ ենք թէ տեղական կառավարութիւնը շուտով վերահասու պիտի ըլլայ թէ իր

նստիկանական միջամտութիւնը առաջ բերողները որո՞նք ալ որ եղած ըլլան, բնաւ ո եւ է փաստ չունին արդարացիներու իրենց այդ քայլը, որով կրնանք համարձակ ըսել թէ ոստիկանութիւնը խաբէութեան մը զո՞հ դաշած է:

Տեղական կառավարութիւնը այս բանին վերհասու ըլլալովը, անշուշտ պիտի չլիներէ սր կարգ մը մարդիկ այս կերպով փորձ մը փորձած ըլլան իր օրինական ուժը չարաչար գործածել, անով խաղաղասէր հասարակութեան աչքը վախցնելու: Իրենոյն ժամանակ կառավարութիւնը պիտի հասկընայ անշուշտ թէ Սահմանադրութեան դործագրութիւնը պահանջողները, ինչպէս մինչև Սրբ. Առաջնորդին գալուստը համբերութեամբ սպասեցին, հիմա ալ խաղաղ և օրինական միջոցներ միայն ընտրած են իրենց նպատակին հասնելու համար: Օրէնքին գործադրութիւնը պահանջողներն ա՛յնչափ վստահ են իրենց դատին արդարութեանը և օրէնքի ու ճշմարտութեան ուժին վրայ, որ բնականաբար չեն կրնար և ոչ իսկ պէտքն զգալ ապօրէն միջոցներու:

Ասոր հակառակ ճշմարտութեան և օրէնքի դատին գէ՛մ կանգնողները շուտով պիտի տեսնեն թէ իրենց պահեստի վերջին միջոցն ալ — բռնի ուժի կիրառութիւնը — վրիպելու դատապարտուած է, շեղհիւ տեղական կառավարութեան կորստամտ աչալըրջութեանը:

Ինչպէս սուտը չի փոխեր իրականութիւնը, նոյնպէս բիրտ ուժը չի կրնար օրինաւոր դարձնել ինչ որ էսպէս ապօրինաւոր է. ՌԻՃԸ ՕՐԷՆԻ ԶԻ:

210 ԵՆ ՄԷԿԸ

— Յաջորդ քիւին մնաց շարունակութիւնը Տիար Յ. Պէֆարեանի յօդուածին, որ կը վերջանայ:

Ք Ր Ո Ն Ի Կ

Ս. Զ Գ Ա Յ Ի Ն

— Զարդերը. — Հայրենիքէն հասած վերջին լուրերը արժանիկ են: Զարդերուն կրկնութիւնն է որ կ'սկսի: Հաւաստեկ, Մառնիկ, Առախ, Բերդակ եւ Մոկոնեֆ գիւղերը Շէրիճ Աղայի եղբօրը Նիաշիին սպանման պատճառով հիմնաւեր դարձուցին եւ գիւղացիներէն շատերն ալ սպաննեցին:

— Գեր. Տ. Յովսէփ Սրբազան անցեալ շաբթուրնէ ՚ի վեր տեղս կը գտնուի: Կիրակի օրուան ծայտուն ուսիկաններուն Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցին մտնելու ու մինչեւ ցաւարս ժամերգութեան անունց հոն սպասելը տեսած է Նորին Սրբազանութիւնը, առանց վտրիկ դիտողութիւն մ'իսկ ընելու գոնէ անունց կեցուածքից դէմ:

Կ'իմանամք թէ երէկ ուսիկանութեան երկու պատճառներ Սուաջուր դարան եկած ու երկար տեսակցութիւն մ'ունեցած են Գեր. Տ. Յ. Այվազեանի հետ...:

— Թե՛ժօրմի երեկուան քիւին մէջ «Թողո՛ք մը» վերնագրով խիստ կարեւոր նամակ մը հրատարակուած է կիրակի օրուան ուսիկաններուն մեջ Ս. Եկեղեցին մտնելուն, եւ այդ ժամուր միջադէպին ինչ ինչ պարագաներուն վրայ: Այդ ամեն Հայու արժին մօտիկ նամակին բարգձմանութիւնը պիտի հրատարակենք յաջորդով:

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— Սուրբանը Գերմանիոյ միջամտութիւնը խնդրած է Շրանիեթուրֆ միջադէպին առթիւ:

— Պաշխաններու մէջ. ՆԻԼԷԻՍ Վիեննայ ժուրնալ թերթը Հոռուէն հետագիր մը կը հրատարակէ ի մասին հնարաւոր համաձայնութեան մը Ռուսիոյ, Իտալիոյ, Սերպիոյ եւ Մօնթենէկրօյի միջեւ:

Ռուսիան թելադրած է այս գաղափարը, Սերպիան ու Մօնթենէկրօն Ռուսական մեծ նահանգի մը վերածելու դիտումով:

— Գահիրէի հայ Լազան Ընթերցատան Ընկերութեան Գործ. Վարչութիւնը գեղեցիկ դաղափարը յղացած է առաջիկայ կիրակի Սեպտ. 8ին տօնելու Մայր-Հայրենիքի բերաւոր նահատակներուն առ յաւէտ խնկելի յիշատակը:

Կը յորդորենք «Փիւնիկ»ի ընթերցողներն և Գահիրէի հասարակութենէն զատ բովանդակ Եգիպտահայ գաղթականութիւնը, փութալ ներկայանալու այդ նշանակալից ու խորհրդաւոր Մեծ Տօնին, որ մեծադոյն է քան Ս. Վարդանանցն ու քան ամեն ազգային Տօները:

Երթա՛նք, Հայե՛ր, երթա՛նք, մեր մատղաջ սերնդին թարմութիւնը վայելենք այն անմեղուկներուն արծաթի թրթռուն ձայներուն մէջ, որոնք պիտի երգեն Հայրենիքի Մեծ Ազէտքին երգերը:

Երթա՛նք, Պանդո՛ւխտ Հայեր, նորագել հոն մեր հայրենի յիշատակները. . . .

ՀԱՆԴԵՍ ԵՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի Պ Ա Տ Ի Ի

ԲՈՒՈՐ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿԱՅ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Մեր այնքան մեծ սուգն ու կսկըծալի վէրքերը՝ զորս կը սնուցանենք 300,000 նահատակներու խնկելի յիշատակին հանդէպ՝ մեզ կը դրդեն հրապարակաւ բաժնելու Ազգային այն վիթխարի ցաւերը, որոնք սահմանուած են սերմը լինելու ազատութեան դաղափարին ու մարդկային իրականց.

Սիրելի է յուսալ որ, Բուրգերուն երկիրը տարագրուած Հայերը գոնէ՛

այս Մեծ - Տօնին յանձն պիտի առնեն փայլելու իրենց ներկայութեամբը պատուելու համար ա՛յնչափ արցունքներ խլող եղբայրներուն գերեզմանները:

Ուստի Սեպտեմբեր 8 ի կիրակի գիշեր ժամը 8 1/2 ին ՀԱՆԴԵՍ տեղի պիտի ունենայ ի Շարա Ապտուլ - Ազիզ Եգիպտական Թատրոնին մէջ:

1. Չորս անձնաւորութիւնը պիտի բանախօսեն Ազգային կեանքի վերայով, ու ատեն ատեն կանխաւ պատրաստուած երգեցիկ խումբ մը Միւսիւ Բուրթիի նուագախումբի ընկերակցութեամբ Ազգային ընտիր կտորներ պիտի երգէ:

2. Երկու փոքր օրիորդներ ալ ոտանաւորներ պիտի աշտասանեն:

3. Պիտի ցուցադրուի «Մայր-Հայաստանի Կենդանի Պատկերը» վերջաւորութեամբ «Փրկութիւն Մայր-Հայաստանի» փոքր արարուածով մը:

4. Կարգադիր մասնախումբս բանակցութեան մտնելով Տ. Ս. Պէնլեանի հետ, ուրախ է յայտնելու որ յարգելի արուեստագէտը մասնաւոր կարգադրութեան մը համեմատ՝ յանձն առած է իր խմբով հանդէսէ վերջ սգակիր ժողովրդին ներկայացնել Սեի ՀՈՂԵՐԷ:

Վ Ի Ի Պ Ա Կ

Նախորդ թիւով հրատարակուած Լեոն Մկրտիչեանի Ռեֆրա՛նին Երգ տողին մէջ, դրաշարական սխալով մը փոխան սկ Տ Ի, Ս դրուելով՝ տպագրուած է Սեանկներու Խղափուզ. ուստի պէտք է կարգալ Տնանկներու Խղափուզ, եւ ոչ թէ Մնանկներու: